

Ժողովուրդ

89
(2755)

21 հունիսի չորեքշաբթի 2023
տպագրության ժԲ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ +374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՓԱՇՏՆՅԱՆԸ ԿԲԿԻՆ ՄՏՈՒՄ Է



Երեկ՝ պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի նիստի ժամանակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսեց 44-օրյա պատերազմը ընթացքում դադարեցնելու հնարավորությունների մասին: Անդրադառնալով հոկտեմբերին պատերազմը դադարեցնելու հնարավորությանը՝ Փաշինյանը նշեց. «Խաղաղապահներ պետք է տեղակայվեն ոչ միայն Ղարաբաղում եւ Լաչինի միջանցքի երկայնքով, այլեւ Մեղրիում՝ ապահովելու Ադրբեջանի արեւմտյան շրջանների հաղորդակցությունը Նախիջեւանի հետ: Ես չհամաձայնեցի նաեւ դրան. չհամաձայնեցի, որ ՀՀ տարածքում ՀՀ վերահսկողության տակ չգտնվող շերտ, այսինքն՝ միջանցք ստեղծվի՝ ասելով, որ ճանապարհին համաձայն եմ, միջանցքին՝ ոչ: Այսինքն՝ իմ դիրքորոշումը ինչպես հիմա, նախկինում էլ եղել է, որ ես կարծում եմ՝ այո, ճանապարհները պետք է բացվեն, այո, Ադրբեջանի արեւմտյան շրջանները պիտի Նախիջեւանի հետ կապի հնարավորություն ունենան, բայց դա չի կարող լինել միջանցք, եւ դա պետք է լինի ՀՀ ինքնիշխանության եւ իրավագրության ներքո»: Սակայն այստեղ մեջբերենք 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետը. «Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է տրանսպորտային հաղորդակցությունը Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ երկու ուղղություններով՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ ապրանքների անխցընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային երթուղիների հսկողությունն իրականացնում են ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ ծառայության մարմինները: Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը Ադրբեջանի արեւմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների կառուցում»: Այսինքն՝ Փաշինյանի ստորագրած փաստաթղթում հստակ նշված է ապաշրջափակման մասին, որը պետք է հսկվի ռուսական սահմանապահների կողմից, սակայն Փաշինյանը երեւել է նախկինում եւս խոսում է դրա անթույլատրելիության մասին: Պարզապես հիմա Փաշինյանը եվրոպացիների մոտ ցանկանում է ցույց տալ, թե ռուսների վերահսկողությամբ ճանապարհ չի թուլատրելու, մինչդեռ 2020-ին ստորագրել է դրա տակ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի խորհրդական, նրա մտերիմ դարձած Արման Հակոբջանյանին այս օրերին հաջողվել է փախչել Արցախից՝ «ճեղքելով» շրջափակումը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար փորձեց անձամբ կապ հաստատել Արման Հակոբջանյանի հետ: Սկզբում զանգահարեցինք նրա Արցախի հեռախոսահամարին, որն անհասանելի էր, այնուհետեւ զանգահարեցինք նրա Երևանյան հեռախոսահամարին. Հակոբջանյանը պատասխանեց այդ հեռախոսահամարին: Նա չցանկացավ մեկնաբանություն տալ, բայց ոչ էլ հերքեց մեր տեղեկությունը. «Ես չեմ պատրաստվում մեկնաբանություն տալ: Շատ մարդիկ գտնվել են այս կողմում, բայց ճանապարհը փակվելուց հետո կարողացել են դուրս գալ: Այդ ի՞նչ հարց է, որ տալիս եք: Ես պարտավոր եմ մեկնաբանություն տալ. դա իմ անվտանգության հարցն է», -ասաց նա: Այսինքն՝ ըստ Հակոբջանյանի՝ Արցախում ապրելն այլեւս անվտանգ չէ: Սա ասում է Արցախում պետական պաշտոն զբաղեցրած անձնավորությունը: Հարցին, թե Արցախից ինչպես է փախչել, դուրս եկել, վերջինս վրդովված արձագանքեց. «Ես չեմ կարող դրական պատասխան տալ. ինձ ով զանգում, հարցնում է, ես ոչ մեկին չեմ պատասխանում ուր եմ: Ինչու՞ պետք է ասեմ: Ես ո՞վ եմ, գործարար տղա եմ, ի՞նչ հետաքրքրություն կա՞ ինձ հետ կապված»: Հակոբջանյանն այդպես էլ չհասկացավ, որ Արցախի հաշվին հարստացած, Արցախի գրեթե բոլոր մրցույթներում հաղթած ու միլիոններով գումարներ աշխատած մարդը երբ շրջափակված Արցախից դուրս է գալիս, փախչում է, դա շատ վատ ազդակ է շարքային քաղաքացու համար: Այսինքն՝ էլ ոչինչ չկամանելու Արցախում: Իսկ թե ինչով է զբաղված Արման Հակոբջանյանը Երևանում, կներկայացնենք հաջորդիվ:



Աշխարհը սպասվող ավագանու ընտրություններին ընդառաջ՝ հայաստանյան ներքաղաքական դաշտը վերջին շրջանում ակտիվացել է: Տարբեր քաղաքական ուժեր հայտ են ներկայացրել ավագանու ընտրություններին մասնակցելու համար: Այս առումով առավել ակտիվ է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որը ընտրություններից դեռ 3 ամիս առաջ ողջ ռեսուրսով լծվել է ավագանու ընտրությունների նախապատրաստական աշխատանքներին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ կուսակցության դիլիջանյան քաղաքական ժողովի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, եղել է նաեւ ավագանու ընտրությունների հարցը: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանից հետաքրքրվեց՝ քննարկումների արդյունքում ինչ որոշում են կայացրել, ինչ ձեռնարկներ են մասնակցելու ընտրություններին: «Կարծում եմ՝ ընտրությունների մասնակցության ձեռնարկի մասին դեռ վաղ է խոսելը: Մենք լրացուցիչ հայտարարություն կանենք այդ մասին, ամեն ինչ՝ իր ժամանակին», -ասաց նա: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրոյցում «Լուսավոր Հայաստանի»-ի քաղաքագետի թեկնածու Դավիթ Խաժակյանը չէր բացառել, որ, հնարավոր է, ՔՊ-ի հետ դաշինքով մասնակցեն ավագանու ընտրություններին: Այս թեմայով քննարկումներ եղել են արդյոք ՔՊ-ում, հավանական համարում է Խաժակյանի կամ այլ թեկնածուի հետ դաշինքով մասնակցությունը: Հարցերին ի պատասխան՝ Ալեքսանյանը չբացառեց՝ ասելով. «Կրկնում եմ՝ չափազանց շուտ է այդ թեմայով մեկնաբանություններ անելու համար»: Այսինքն՝ ՔՊ-ն ժողով է արել ու դեռ չի հստակեցրել՝ միայնակ է մասնակցելու, թե դաշինքով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիրի քննչական բաժնում կյանքը կանգ է առել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Արաբկիրի քննչականում ԱԱԾ-ի աղմկահարուց բացահայտումից հետո ողջ անձնակազմին ազատել են աշխատանքից, եւ փոփոխություններ են սկսել, ուստի քրեական վարույթների քննությունները, իրավիճակով պայմանավորված, կանգ են առել: Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն բացահայտել էր, որ բաժնի քննիչները թմրանյութի իրացմամբ են զբաղվել, ինչի արդյունքում քննիչներ կալանավորվեցին:



ԶՐՈՒՅՑ

ԱՆՊՐԱՌԱՐՁ՝ ԲՆԵՒՉ ՎԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՎԻ ՎԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հեռ գրույցում ԱԺ «Հայաստան» խմբակցության դասգամավոր Գեղամ Մանուկյանը երեկ անդրադարձել է Նիկոլ Փաշինյանի՝ ԱԺ քննիչ հանձնաժողովում հնչեցրած հայտարարություններին:

-Պարոն Մանուկյան, Նիկոլ Փաշինյանը քննիչ հանձնաժողովում պատասխանեց պատերազմի հանգամանքների վերաբերյալ հարցերին: Անդրիմությունը ինչու՞ հրաժարվեց մասնակցելու: Ինչու՞ չգնացիք եւ այն մեղադրանքները, որոնք հնչեցնում էք պարբերաբար, հենց Նիկոլ Փաշինյանին չասացիք. նիստը ուղիղ եթերում է, բաց է:

-Քանի որ այն, ինչի մասին խոսել ենք անցնող երկու տարում Ազգային ժողովում ելույթների, հարց ու պատասխանների ժամանակ, հնչեցվել է, հարցերը ուղղել ենք, ստացել ենք նույն իրարամերժ պատասխանները, եւ իր հրապարակային դասախոսությունը կամ ուսանողական աշխատանքը ներկայացնելը վկայում է, որ ընդդիմադիր երկու խմբակցության որոշումները ճիշտ էին եւ արդարացված, որովհետեւ կա մի քանի հանգամանք: Նախ՝ քննիչ հանձնաժողովը, որ ձեւավորվում է, ձեւավորվում է ինչ-որ կանոնակարգի համաձայն: Քննիչ հանձնաժողովի ներկայացրող բոլոր պաշտոնյաների, զինվորականների կարգավիճակով հարցեր պետք է ուղղվեն, եւ նրանցից պարզաբանումներ ստանան: Ստեղծվել է անևորմալ իրավիճակ: Նախկինում գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանը, այլ զինվորականներ, այլ անձինք քննիչ հանձնաժողով են եղել, փակ նիստերում խոսել են, պատասխանել են հարցերին, թեեւ հասարակությանը անհայտ է, թե ինչ են պատասխանել: Մեր՝ ընդդիմադիր պատգամավորների փորձերը ծանոթանալու այդ նոթերին, մերժվեց՝ պատճառաբանվելով, որ մենք բոլորտում ենք, դրա համար իրավունք չունենք ծանոթանալու: Զիմա



ստացվել է մի իրավիճակ, երբ Նիկոլ Փաշինյանը բաց խոսում է՝ չքննադատելով, մնացած բոլոր վկայությունները, ցուցմունքները պատասխանները հասարակությունից գաղտնի է պահվում: Ստեղծվում է անհավասարություն: Եթե Նիկոլ Փաշինյանին ուղիղ եթեր են տալիս, թող նաեւ հրապարակեն բոլոր հայտարարությունները, որպեսզի պարզ լինի ամեն ինչ: Երկրորդ՝ Նիկոլ Փաշինյանի ասածի մեջ 44-օրյա պատերազմի հետ կապված որեւէ բան չկա: Նիկոլ Փաշինյանի կողմից սա հերթական մանիպուլյացիոն քայլն է՝

հանրությանը կերակրել մի թեզով, որ 25 տարի առաջ Ղարաբաղը տվել են, ինքը եկավ, իր գրպանը զցցեցին, եւ խեղճ հարիճը ասում է, որ բոլորը՝ Զայկ Նահապետից սկսած, մեղավոր են, բացի իրենից: Այս առումով նույնիսկ քննիչ հանձնաժողովի գործողություններին ներառված պատգամավորների տված հարցերը ցույց չեն տալիս այդ օբյեկտիվությունը: Առաջին օրվանից ենք մենք ասել, որ այս ձեւաչափով քննիչ հանձնաժողովը չի կարող օբյեկտիվ քննություն անել:

Զրույցը ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՌԵՐԻ ԷՏՈՒՄԸ՝ ԳԺԳՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

Երեւանի կենտրոն վարչական շրջանի Ամիրջան փողոցում է իրականացվում է ծառերի էտում՝ արգելափակելով մայրերը եւ մեծ խցանումների դասճառ դառնալով երբեկության համար:

Երեւանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Դուկասյանը եւ Երեւանի քաղաքապետարանի «Կանչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ԶՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը հերթական անգամ իրականացնում են գործողություն՝ առանց հաշվի առնելու, թե ինչ խոչընդոտների առաջ են կանգնեցնում քաղաքացիներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, թե ինչ խայտառակ իրավիճակ է տիրում Ամիրջան փողոցում, եւ ականատես ենք եղել վարորդների եւ քաղաքացիների վրդովմունքին, թե այս ժամին ինչպես են նման գործեր նախաձեռնում: Մենք կապ հաստատեցինք Կենտրոն վարչական շրջանի «Կանչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ԶՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի հետ, որը, մեր հարցերին ի պատասխան, ասաց. «Երկու օր առաջ եղած ուժգին քամու պատճառով այդ հատվածում ծառի ճյուղ էր կտրվել, եւ այսօր այն հեռացվել է»:



Չարցին, թե հնարավոր չէր արդյոք այնպիսի ժամի կատարել աշխատանքները, որպեսզի քաղաքացիների համար անհարմարություններ չստեղծվեն, մեր գրուցակիցը պատասխանեց. «Ամբողջ քաղաքում ունենիք նման դեպքեր եւ, ըստ իրատարության, կատարել ենք ապամոնտաժման աշխատանքները»:

Ի դեպ, նկատենք, որ ծառի այն հատվածում, որտեղ իրականացվում էր կտրված ճյուղերի ապամոնտաժումը, հատուկ ժապավենով առանձնացված չէր, եւ քաղաքացիների անվտանգությունն ապահովված չէր, ինչը ամենակոպիտ խախտումներից է «Կանչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ԶՈԱԿ-ի կողմից:



ԲԱՐՉՐԱՑՎԵԼ ԵՆ ԳՐՈՇՆԵՐԸ

Երասխի մետալուրգիական գործարանում հունիսի 20-ին բարձրացվել են Զայաստանի եւ ԱՄՆ դրոշմերը:

Գործարանից արդեջանական դիրքերը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա են:

Արդեջանական կողմը պարբերաբար թիրախավորում է գործարանի տարածքը:

Հիշեցնենք, որ հունիսի 14-ին էլ Արդեջանի կրակոցների հետեանքով վիրավորում էր ստացել գործարանում աշխատող ազգությամբ 2 հնդիկ:

ԳԱԳՏՆԱԼՍՈՒՄՆԵՐ

Ուժային կառույցները Զայաստանում աշխատում են գաղտնալսման պայմաններում: «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ գաղտնալսման արդյունքում դատախազներ են ազատվել աշխատանքից, իսկ ոմանց մասով ծառայողական քննություն է սկսվել:

Այսպիսով, մեզ հասած լուրերի համաձայն՝ ԶԶ գլխավոր դատախազությունը կասեցրել է Արմավիրի մարզի դատախազ Աշոտ Մարտիրոսյանի եւ Կոտայքի մարզի դատախազ Ապրես Գրիգորյանի լիազորությունները եւ ծառայողական քննություն է սկսել նրանց նկատմամբ: Իսկ ինչու: Բանն այն է, որ իրավապահները, գաղտնալսելով Արմավիրի դատախազ Աշոտ Մարտիրոսյանին եւ Կոտայքի դատախազ Ապրես Գրիգորյանին, պարզել են, թե ինչպես են նրանք ներսրտած խոսում, քննադատում ու տարբեր կարծիքներ արտահայտում Արմավիրի դատախազ Վահան Սարգսյանի կամ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին: Այս ներքին քննարկումն էլ ճակատագրական է դարձել երկու դատախազների համար, ու նրանց լիազորությունները գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դադարեցրել է ու սկսել ծառայողական քննություն:

Այսքանով դատախազությունում «վիուկների որս» ու ներքին «խժռոցը» չի ավարտվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անգամ ԱՄՇ-ն այս գաղտնալսման արդյունքում մտել է Կոտայքի ու Արմավիրի մարզերի դատախազություն, դատախազներին պառկեցրել գետնին ու սկսել գործողություններ: Այստեղ էլ հասունացել է դրամայի երկրորդ մասը. Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանի գործելանոցը դատախազների մոտ սկսել է քննարկվել Սերժ Սարգսյանի գործը քննող դատախազ Արսեն Մարտիրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի գործը քննող դատախազ Պետրոս Պետրոսյանի հետ ունեցած խոսակցությունների ժամանակ: Նրանք ոչ այդքան հաճելի կարծիքներ են արտահայտել Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանի հասցեին, ինչպես նաեւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին: Եվ, ահա, այս գաղտնալսումն էլ պատճառ դարձավ, որ օրերս աշխատանքից ազատվեն դատախազներ Արսեն Մարտիրոսյանը, Պետրոս Պետրոսյանը եւ գլխավոր դատախազի տեղակալ Գեորգ Բաղդասարյանը: Իրավիճակը ցույց է տալիս, որ դատախազները ներքին միջանձնային խոսակցության համար ազատվում են աշխատանքից: Այլ կերպ ասած, Զայաստանը վերածվել է գաղտնալսումների երկրի, որտեղ քաղաքական իշխանությանը ընդդիմացողների խոսքի ազատությունը ոտնահարվում է:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿԱՐՈ՞Ղ ԷԻՆՔ ԽՈՒՄԱՓԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՏԵՍՈՒՄ Է

«Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման խորհուրդը հայտարարություն է տարածել, որում ասվում է.

«Արդեն հինգ օր է՝ Արցախը Հայաստանին եւ աշխարհին կապող միակ ճանապարհը փակ է անգամ ծանր հիվանդների տեղափոխման եւ հումանիտար բեռների ներկրման համար:

«Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ»-ը դատապարտում է Արցախի լիակատար պաշարման փաստի անտեսումը միջազգային հանրության կողմից:

Արցախի Հանրապետության 120 հազար քաղաքացիների, այդ թվում՝ 30 հազար երեխաների, 20 հազար տարեցների եւ հարյուրավոր անհետաձգելի բուժման կարիք ունեցող հիվանդների՝ օրեցօր խորացող հումանիտար խնդիրներին դեպքերատիվ հայտարարություններով արձագանքելու եւ Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի կոպիտ խախտումներն անհետեսանք թողնելը համարում ենք միջազգային կազմակերպությունների կողմից երկակի ստանդարտների կիրառում եւ իր հայրենիքում ապրող քնիկ ժողովրդի հանդեպ եթերիկ գտումների ու ցեղասպանական նկրտումների իրագործման խրախուսում:

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրացված իրավունքը «Ղարաբաղում բնակվող հայերի իրավունքների եւ անվտանգության» անհասկանալի ձեւակերպմամբ փոխարինած Հայաստանի Հանրապետության իշխանությունները փաստացի Արցախը տանում են դեպի բռնակցում Ադրբեջանի:

Անընդունելի է նաեւ, որ Արցախի Հանրապետության իշխանությունները, դուրս մտնելով սեփական ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ բանակցություններից, սահմանափակվում են միայն հումանիտար աղետը կանխելու նպատակով բնակչությանը «խիստ տնտեսման» կոչեր հղելով:

Արցախը Հայաստանին եւ աշխարհին կապող ճանապարհին տեղադրված արդրբեջանական անցակետը 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթների ակնհայտ խախտում է, ուստի պահանջում ենք ռուս խաղաղապահ զորակազմից ապահովել նշյալ հայտարարությանը ամրագրված դրույթների կատարումը՝ անհապաղ ապաշրջափակելով միջանցքը:

Կոչ ենք անում հայկական բոլոր կազմակերպություններին եւ ազգային կառույցներին, աշխարհի տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցներին բողոքի ձայն բարձրացնել Արցախի ժողովրդին պատուհասած աղետի կապակցությամբ եւ դիմել իրենց նստավայրեր կարողություններին ու խորհրդարաններին՝ Ադրբեջանի դեմ միջազգային պատժամիջոցներ կիրառելու պահանջով:

Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության իշխանություններից պահանջում ենք ձեռնարկել հայ ժողովրդի առջեւ ստանձնած պատասխանատվությունից բխող անհետաձգելի գործողություններ՝ պաշտպանելու Արցախի ժողովրդի ինքնիշխանությունը:

Մենք բոլոր հնարավոր միջոցներով պայքարելու ենք հայրենիքում ազատ ապրելու մեր իրավունքի համար, եւ Արցախի Հանրապետության դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն արժանանալու է համարժեք պատասխանի»:

«Կարո՞ղ էինք արդյոք խուսափել 44-օրյա դաժնեհարկից, եւ եթե այո, աղա ինչո՞ւ»,- 44-օրյա դաժնեհարկի հանգամանքներն ուսումնասիրող ֆենիչ հանձնաժողովում հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նա նաեւ նշեց. «Ամենայն հավանականությամբ՝ այո, եթե նախորդ 25 տարիների ընթացքում լուծված լիներ Լեռնային Ղարաբաղի հարցը:

Բայց այստեղ մի էական հարց է ծագում. ուզո՞ւմ էինք արդյոք լուծել ԼՂ հարցը: Սրան գուզահեռ՝ մի շատ ավելի հին նարար ու խորքային հարց է ծագում. կարո՞ղ էինք արդյոք լուծել ԼՂ հարցը ու եթե այո, ինչպե՞ս:

Կարիք կա քննարկել բանակցային պատմությունը, որի հանգրվանային կետերին այժմ կնդրադառնալ: Իրականում բանակցային գործընթացը եւ նրա բովանդակությունը ուղիղ կապի մեջ են եղել ՀՀ ներքաղաքական իրադրության եւ իրադարձությունների հետ, ինչը որքան էլ բնական, այնուամենայնիվ, ամենաներհատիվ դերն է խաղացել ԼՂ հարցի կարգավորման գործընթացի վրա, որովհետեւ մեր ներքաղաքական կյանքում 1994-ի մայիսի 12-ի հաղթական զինադադարից հետո դրական իրադարձությունների մեծ դեֆիցիտ է եղել:

ԼՂ հարցի կարգավորման մասին մտածելիս առաջին հանգամանքներից մեկը, որ մտաբերում ես, ԵԱՀԿ Լիսաբոնի գաղաթանաթի 1997 թվականի նոյեմբերի 1-ին հրապարակված հոդվածը՝ «Պատերազմ, թե՛ խաղաղություն. լրջանալու պահը» վերնագրով, որտեղ Տեր-Պետրոսյանը խոսում է փոխզիջումների անհրաժեշտության մասին:

Եթե կարճ ձեւակերպելք Տեր-Պետրոսյանի ասածները, կստացվի հետևյալը. ստատուս քվոն երկար ժամանակով պահել հնարավոր չէ, ինքնախաբեությամբ չզբաղվելք, զուր պատրանքներ չփայլալենք, Ղարաբաղի անկախության հարցում մենք դաշնակիցներ չունենք: Հետեւաբար պետք է այնպես անել, որ առաջիկա հազարամյակում էլ Արցախը մնա հայերով բնակեցված:

Հետաքրքիրն այն է, որ դա ասելով՝ Տեր-Պետրոսյանը այդ հոդվածում այդպես էլ հստակ եւ բառացի պատասխան չի տալիս մի հարցի՝ ի վերջո, ի՞նչ կարգավիճակ է ունենալու ԼՂ-ն՝ լինելու է անկախ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի կազմում:



Տեր-Պետրոսյանի այս հոդվածը բուն հակազդեցություն ստացավ հանրային քաղաքական վերնախավի շրջանում: Ժողովրդի մասին ոչինչ չենք կարող ասել, որովհետեւ ժողովրդական կարծիքի արտահայտման կոնկրետ դրսևերումներ 1997-ին կարծես չեն եղել:

Իրականում, սակայն, Լեւոն Տեր-Պետրոսյանի հոդվածը Ղարաբաղի հարցում մեր խճճվածությունն ամրացնող հերթական հանգույցն էր մի քանի պատճառներով:

Նախ, հոդվածի հրապարակումից ուղիղ մեկ տարի առաջ Տեր-Պետրոսյանը նախագահական ընտրություններին մասնակցել էր «Հաղթանակ, կայունություն, առաջընթաց» կարգախոսով, բայց կասկածելի լեգիտիմություն ունեցող այդ ընտրություններից մեկ տարի անց խոսում էր խաղաղության, եւ ոչ հաղթանակի մասին: Այդ հոդվածից 7 տարի 11 ամիս առաջ՝ 1991 թվականի դեկտեմբերի 1-ին, Հայկական ԽՍՀ ԳԽ-ն եւ ԼՂԻՄ Ազգային խորհուրդը համատեղ որոշում էին կայացրել Հայաստանի եւ ԼՂ-ի վերամիավորման մասին: Այդ հոդվածից 7 տարի 2 ամիս 9 օր առաջ՝ 1990-ի օգոստոսի 23-ին, Հայաստանի ԳԽ-ն հիմնվելով 1989 թվականի դեպտեմբերի 1-ի վերամիավորման մասին համատեղ որոշման վրա, Հայաստանի անկախության գործընթաց էր հռչակել:

Այդ հոդվածից 6 տարի 1 ամիս 10 օր առաջ՝ 1991-ի սեպտեմբերի 21-ին, տեղի էր ունեցել Հայաստանի անկախության

հանրաքվեն, որով «դե յուրե» ավարտին էր հասցվել Հայաստանի անկախության գործընթացը:

Այդ հոդվածից 6 տարի 1 ամիս 29 օր առաջ՝ 1991-ի սեպտեմբերի 2-ին, ԼՂ-ն հռչակել էր իր անկախությունը: 1991-ի դեկտեմբերի 10-ին ԼՂ-ում տեղի էր ունեցել անկախության հանրաքվե, որով «դե յուրե» ավարտին էր հասցվել ԼՂ անկախության գործընթացը:

Բայց կարելի է նաեւ այն, թե ինչ տեղի ունեցավ հետո: «Պատերազմ, թե՛ խաղաղություն» հոդվածում Տեր-Պետրոսյանը գրում է. «Անձնական փառքի կամ հերոսականացման ձգտելու պարագայում ես պարզապես չեմ մասնակցի 1996 թվականի ընտրություններին՝ սերունդների աչքում մնալով որպես անկախության նվաճած, դարաբաղյան հերոսամարտը շահած, հայկական տարածքներն ընդարձակած նախագահ՝ անկախ այն բանից, թե որքանով արդարացի է այդ ամենի ինձ վերագրումը: Ի՛նչ փույթ, թե դրանից հետո ինչ կպատահեր, եւ ում վրա կընկներ իրավիճակի վատթարացման պատասխանատվությունը, միեւնոյնն է, դրանից իմ վարկանիշը չէր տուժի, այլեւ ընդհակառակը, թերեւս ավելի շահեր: Բայց դա կլիներ ոչ այլ ինչ, եթե ոչ փոքրոգի դասակարգություն, որին, դժբախտաբար, թե բարեբախտաբար, սովոր չեմ»: Այս հրապարակումից 3 ամիս 3 օր հետո Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարական է տալիս ՀՀ նախագահի պաշտոնից»:

ԲԼՈՎԱԴՐԱ

ԶԻՆՔԱՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՓԱԿԵԼ ԵՆ ԱՐՑԱՒԻ ՃԱՄՓԱՆ

«Արցախը արդրբեջանական օրջափակման ներքո է արդեն 191 օր շարունակ, եւ այս ընթացքում մարդկանց ու հումանիտար բեռների խիստ սահմանափակ սեղաճարժը կազմակերպվել է բացառադեպ Կարմիր խաչի ու խաղաղադաժահների կողմից:



«Կից լուսանկարները ցուցադրում են, թե ինչպես են վերջին օրերին արդրբեջանական զրահամեքենաները փակել Արցախ-Հայաստան միակ ճանապարհը՝ իրենց

ապօրինի անցակետի մոտ: Սա՛ է «ազատ տեղաշարժի» իրենց երաշխիքը, որ այդքան խաբում են աշխարհին, թե, իբր, շրջափակում չկա: Արցախն արագորեն գլորվում է անվտանգային ու հումանիտար աղետի անդունդը, եւ բոլոր պետությունները պետք է իրենց բաժին պատասխանատվությունը ստանձնեն ու կանխեն վերահաս ողբերգությունը, ոչ թե մեկը մյուսի վրա գցի պատասխանատվությունը:

Ակնկալում ենք ամենահրատապ ու գործնական քայլերը Հայաստանից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Եվրամիությունից, ՄԱԿ-ից եւ մաջած բոլոր դերակատարներից, իսկ անցարհասպիյուռ հայությունից՝ մեծ ճնշում բոլորի հանդեպ»,- գրել է Արտակ Բեգլարյանը:

ՆՈՐ ՎԱՐՈՒՅԹ

ՕՏԱՐՎԱԾ ԳՊՐՈՑՆ ՈՒ ԱՊՕՐԻՆԻ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Բննչական կոմիտեի ՀԿԳ Բննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների Բննության վարչությունում Եւրոմիտի «Երեւանի Միքիթա Հեւացու անվան դեռահաս երեւանցի համալսարան» հիմնադրամում կատարված առերես կոռուպցիոն շահաւորումներին առնչվող Բննության վարչության Եւրոմիտի հրահանգով Բննության Եւրոմիտի մեծաթիվ գործողությունների արդյունքում սվյալներ են ստացվել առերես կոռուպցիոն հանցագործության այլ դեմքի մասին եւս: Այս մասին տեղեկանում ենք ՔԿ-ի հաղորդագրությունից:



Այնուհետեւ Արման Սահակյանը եւ նրա օգնականը, առանց որեւէ հիմնավորման, վերը նշված գույքի նկատմամբ որեւէ սահմանափակում չգրանցվելու եւ մինչեւ գույքի արժեքը վճարելը առանց խոչընդոտի գույքի իրացումը ապահովելու նպատակով 2015թ. մայիսին կնքված համաձայնագրով փոփոխություններ են կատարել սկզբնական կնքված առուվաճառի պայմանագրում հանելով գույքը գրավադրված լինելու մասը, ինչի հիման վրա տրվել է անշարժ գույքի սեփականության վկայական:

Այնուհետեւ նրանք դիմել են ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական տեղեկանք ստանալու եւ համապատասխան գործարք կատարելու համար: Սակայն տրված տեղեկանքում նշվել է տարածամետ վճարելու պայմանը, որի պատճառով իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կարողացել ավարտին հասցնել գործարքը:

Մասնավորապես, վարույթի նախաքննության ընթացքում ՀՀ ԱԾ աշխատակիցների հետ համատեղ իրականացված միջոցառումների արդյունքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2011-2018թթ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի պաշտոնը զբաղեցրած Արման Սահակյանը իր հետ ընկերական հարաբերությունների մեջ գտնվող ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար Արմեն Աշոտյանի եւ ՀՀ ԱԾ նախկին պատգամավոր Կարեն Ավագյանի հետ միասին, չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը, իրենց հետ փոխկապակցված անձանց, մասնավորապես՝ Արման Սահակյանի օգնականի, Արմեն Աշոտյանի վարորդի կնոջ եւ Կարեն Ավագյանի կնոջ անվամբ հիմնված «Քիդս Քեյ» ՍՊ ընկերության միջոցով, 2015թ. ապրիլին կնքված պետական գույքի օտարման եւ գրավի պայմանագրով, 163.115.680 ՀՀ դրամ արժեքով ձեռք են բերել պետական գույք հանդիսացող, Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ներսիսյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող 1063.25 քմ մակերեսով 2 առանձին մասնաշենքերից եւ պարսպից բաղկացած անշարժ գույքը/դպրոցը/՝ 36 ամսում տարածամետ վճարելու պայմանով, եւ դրա սպասարկման համար անհրաժեշտ 0.303439 հա հողատարածքը՝ 32.498.320 ՀՀ դրամով:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ԶՐԱՆԱԲԱՃԿՈՆՈՎ ԵՎ ՄԱՂԱՎԱՐՏՈՎ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Փաստաբանները հունիսի 20-ին բողոքի ակցիա իրականացրին Ներքին գործերի նախարարության շենքի դիմաց:



Փաստաբաններից մեկը շենքի մոտ էր եկել գրահաբաճկոնով ու սաղավարտով եւ իր ձեռքին «Ոչ բռնությանը» գրությամբ ցուցանակ ուներ:

Մասին հեռուստացույց էին նվիրել: Փաստաբանների խոսքով՝ հեռուստացույցի միջոցով գլխավոր դատախազը կտեղեկանա փաստաբանների նկատմամբ կիրառվող բռնություններին:

Ավելի վաղ նրանք ՓՊ շենքից երթ էին իրականացրել դեպի ԵՄ գրասենյակ տեղեկացնելով, որ «ԵՄ տրամադրած գումարները ծախսվում են փաստաբանների դեմ բռնության նպատակով»:

Հայաստանի Հանրապետությունում 2023թ. հունվարից մայիսի 31-ը տեղի է ունեցել 1652 ՃՏՊ, որոնցից 280-ը՝ անչափահասների մասնակցությամբ:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԳՐԱՎ ՎԱՐԿԵՐ՝ 21 ԱՆՉԻ ԱՆՈՒՆՈՎ

Ավարտվել է Լոռու մարզի երկու բնակիչների կողմից խոշոր չափերով խարդախություն կատարելու առթիվ նախաձեռնված բազմադրվագ քրեական վարույթի նախաքննությունը:

ՄԱՐԶ

ՄԵԾ ՎԵՍԵՆԵՐ՝ ԻՋԵՒԱՆՈՒՄ

Հունիսի 19-ի երեկոյան՝ ժամը 19:10-ից մինչև 19:25 րոպե, ուժեղ կարկուտ, տեղատարափ անձրևներ են տեղացել Տավուշի մարզկենտրոն Իջեան քաղաքում: Ուժգին քամուց տապալվել են բազմաթիվ պտղատու և դեկորատիվ ծառեր, վնասվել են շենքերի տանիքներ, զանազան շինությունների ծածկեր, տեղատարափ անձրևներից գոյացած սելավները, քարերի ու ցեխի կույտերը լցվել են Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհը, Իջեանի համայնքային Նշանակության ճանապարհները: Միջպետական ավտոճանապարհը որոշ ժամանակ փակ էր տրանսպորտային միջոցների երթևեկի համար, սակայն կատարված աշխատանքների արդյունքում միջպետական ավտոճանապարհը բացվեց: Տեղատարափ կարկուտից հետո Իջեան քաղաքում գրանցվել են բազմաթիվ ավերածություններ, գրեթե ամբողջությամբ վնասվել է գյուղատնտեսական ցանքատարածությունների, պտղատու և խաղողի այգիների բերքը: Տեղացած կարկուտի չափերը մեծ էին, կարկուտի կույտերը երկար ժամանակ չէին հալվում: Կարկուտահարումից, անձրևներից ու սելավներից անմիջապես հետո վնասված ենթակառուցվածքները վերականգնելու նպատակով Իջեանի համայնքապետարանի կոմունալ ծառայության խմբերը և հատուկ տեխնիկան աշխատանքի են անցել: Այդ աշխատանքները տեղում համակարգել է Իջեան համայնքի ղեկավարի տեղակալ Արգիշտի Ամիրխանյանը: Բնական տարերքի հետևանքները վերացնելու նպատակով ծառայություն են իրականացրել և քաղաքացիներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերել ՆԳՍ պարեկային և փրկարար ծառայությունների ու շտապօգնության աշխատակիցները: Հայաստանի էլեկտրական ցանցերի Տավուշի մարզային մասնաճյուղը արտակարգ ռեժիմով է աշխատել: Իջեանի համայնքապետարանում ստեղծվել է հանձնաժողով կարկուտահարության հետևանքով կրած վնասների գույքագրման համար: Իջեան քաղաքում տեղի ունեցած ուժեղ կարկուտահարումից հետո կրկին ծագում է Տավուշի մարզում հակակարկուտային կայաններ գործարկելու խնդիրը: Տավուշի մարզում հակակարկուտային կայաններ գործում են միայն Նոյեմբերյան խոշոր համայնքում, մարզի մյուս 3 համայնքներում Իջեանում, Բերդում, Դիլիջանում, Հայաստանի անկախացումից հետո հակակարկուտային կայաններ չեն գործում: Նոյեմբերյան խոշոր համայնքում էլ հակակարկուտային կայաններ գործում են հիմնականում Դեբեդի հովտում: Նոյեմբերյան համայնքի Ոսկեվանի սահմանամերձ ենթաշրջանի բնակավայրերում հակակարկուտային կայաններ չկան: Վերջին 5 տարում 2018 թվականի Իջեանի մարզում, Նոյեմբերյան համայնքում ընդամենը մեկ հակակարկուտային կայան է ավելացել, մարզում հակակարկուտային կայանների թիվը 12-ից դարձել է 13:
ՈՍՎԱՆ ՍՈՐՈՑԱՆ Տավուշ

ԱՅՑ

ԴԻՄՈՐՔՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՆՔԱՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՆՁՆԵՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անրեայանը երեկ Նար-Գոսի անվան թիվ 14 հիմնական դպրոցում տեղակայված ֆինանսական կենտրոնում հեռեկ է «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական ֆննդության մեկնարկին: Նախարարը ԵՐԿՐՈՐԴ ԵՆՔԱՄ ԱՆՔԱՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՔԱՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՆՁՆԵՆ հանձնարար է ֆննդական սեռ-յակներում, հաջողություն մատչել դիմորդներին: Նախարարի հեռ գրույցում դիմորդներից մի ֆանիսը նշել են, որ հունվարին մասնակցել են առաջին փուլի ֆննդությանը և ֆննդություն են հանձնելու երկրորդ անգամ:



Լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ Ժաննա Անրեայանը նշել է, որ քննություններն ընթանում են բնականոն հունով: Նրա խոսքով՝ դիմորդների՝ երկու անգամ քննություն հանձնելու հնարավորությունն այս տարի է ներդրվել, որը դրական դիմադրարար է ապահովել:

«Այս պահի դրությամբ ոչ մի արտակարգ իրավիճակ չունենք, քննությունները ընթանում են՝ ըստ պլանավորածի: Կարծում եմ այս տարվա՝ 2 անգամվա քննություն հանձնելու հնարավորությունը դրական ազդեցություն է թողել դիմորդների վրա հոգեբանական լարվածության տեսանկյունից և նվազեցրել է սթրեսը: Կային դիմորդներ, որոնք օգտվել են երկու անգամ քննություն հանձնելու հնարավորությունից, ինչը շատ դրական է, որովհետև այսպես հնարավորություն ենք տվել նրանց ավելի հեշտ հաղթահարել քննական գործընթացը: Մի բան հստակ է. դիմորդները երկրորդ անգամ քննություն հանձնելիս ավելի հանգիստ են, սթրեսը նվազել է: Երբ դու ունես մեկ անգամ քննություն հանձնելու հնարավորություն, կշեռքի նժարին մեծ պատասխանատվություն է դրված. կամ կհանձնես քննությունը, կամ ոչ: Այս դեպքում դիմորդներն ավելի հանգիստ են, կենտրոնացած, գիտեն՝ ինչպես օգտագործել իրենց տրված ժամանակը: Սա կարելու փորձ է, որն օգնում է լավ պատրաստվել, երկրորդ՝ արդյունքներն են: Մենք տեսնում ենք, որ երկրորդ փուլում տոկոսային հարաբերությամբ բարձր միավորներ ստացած դիմորդների թիվը աճել է, անբավարարները՝ նվազել», - ասել է նախարարը՝ նշելով, որ այդ միտումը նկատելի է եղել արդեն կա-

յացած միասնական քննությունների արդյունքների նախնական համեմատությամբ: Օրինակ՝ առաջին փուլում «Քիմիա» առարկայից գերազանց էին ստացել դիմորդների 7 տոկոսը, երկրորդ փուլում՝ 14 տոկոսը: Առաջին փուլում նույն առարկայից անբավարար արդյունք էր ապահովել դիմորդների 34 տոկոսը, երկրորդ փուլում՝ 25 տոկոսը:

Նա նաև հույս է հայտնել, որ արդյունքների բարելավում կունենանք նաև «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության դեպքում:

Անդրադառնալով միասնական քննությունների արդյունքներին՝ Ժաննա Անրեայանը նշել է, որ դրանք ընդհանուր առմամբ մտահոգիչ են, և այս առումով լուրջ աշխատանք կատարելու կարիք կա:

«Կայուն դրական արդյունքի ապահովման համար դպրոցի բովանդակային բարեփոխումները, որոնք այժմ ընթացքի մեջ են, կարելու նշանակություն ունեն», - շեշտել է Ժաննա Անրեայանը:

Անդրադառնալով դասագրքերի ստեղծմանը՝ նախարարը նշել է, որ մրցույթ է հայտարարված՝ նոր չափորոշիչների պահանջին համապատասխան:

«Հիմա փորձաքննության փուլում ենք, աշխատանքներն ընթացքի մեջ են: Կարծում եմ՝ ժամանակ է պետք, որպեսզի

մեզ մոտ ձեռավորվի որակյալ դասագիրք գրելու ավանդույթ: Ավելի քան 10 տարի նոր դասագրքեր չեն մշակվել, իսկ դասագիրք գրելը բարդ գործընթաց է՝ մեթոդական, ձեռավորման, հոգեբանության տեսանկյունից: Դասագրքի վրա մի ամբողջ թիվ է աշխատում: Առաջին փուլում միասնական գոհ լինելու հավանականությունը փոքր է, բայց կարելու է գործընթացի իրականացումը, որ դաշտը ձեռավորվի, մասնագիտական խմբեր կազմվեն, և ապահովվեն դասագրքերի բարձր որակ:

Ուզում եմ նաև նշել, որ թեև դասագիրքը շատ կարելու է, բայց ժամանակակից դպրոցներում, հատկապես՝ ավագ դասարաններում, իր նախկին նշանակությունն այն կորցնում է: Առաջատար երկրներում դասերը կառուցվում են ոչ թե մեկ դասագրքի շուրջ, այլ լինում են տարբեր կյոթերի թղթապատկաններ, որպեսզի աշակերտները բազմակողմանի նայեն նույն երեւոյթին, զարգացնեն մտածողությունը: Մենք եւս պետք է գնանք այդ ճանապարհով», - ասել է նախարարը:

Նա նաև նշել է, որ ավանդաբար մեծ թվով քննություն հանձնողներ, ըստ դիմորդների ընտրած մասնագիտության, լինում են «Անգլերեն», «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» առարկաներից: Ավելի քիչ թվով դիմորդներ են քննություններ հանձնում, օրինակ, իտալերենից, իսպաներենից:

ՄԵՂԱԼՆԵՐ

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ՝ ՀԱՇՄԱՆ-ԴԱՄԱՅԻՆ ԲԱԶԿԱՄԱՐՏԻՑ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի հաճախորդային սպորտի ֆեդերացիայի դասակարգված քիսմա ֆաղաֆում 15 մարզիկով մասնակցել է հաճախորդային բազկամարտի Եվրոպայի 24-րդ առաջնությանը:

Ինչպես տեղեկացնում են ԿԳՄՍ-ից, հայ բազկամարտիկները մրցել են ձախ և աջ ձեռքերով՝ նվաճելով 7 ոսկե, 5 արծաթե և 9 բրոնզե մեդալ: Առաջնությանը 31 երկրի մարզիկներ են մասնակցել:

Եվրոպայի չեմպիոններ են հռչակվել Սարգիս Ստեփանյանը, Սարգիս Հարությունյանը, Նաիրա Մետրոպոլյանը, Սարգիս Խաչատրյանը և Գուրգեն Անտոնյանը:

Սարգիս Հարությունյանն ու Նաիրա Մետրոպոլյանը ոսկե մեդալներ են նվաճել թե՛ աջ, թե՛ ձախ ձեռքի մրցումներում:

Արծաթե մեդալներին արժանացել են Սերոբ Հովհաննիսյանը, Գուրգեն Անտոնյանը, Սերոբ Աբրահամյանը, Արմեն Ենոբյանը և Հայկ Ստեփանյանը:

Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալները նվաճել են Հովհաննես Ավանեսյանը, Վալտեր Հարությունյանը (աջ և ձախ ձեռքով), Ենոբ Անտոնյանը, Սարգիս Գաբրիելյանը, Շահեն Բաբայանը, Սերոբ Հովհաննիսյանը, Ատոմ Ենոբյանը, Սարգիս Խաչատրյանը:

Հայաստանի հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի նախագահ Սարգիս Ստեփանյանի խոսքով՝ թիմային արդյունքները գոհացնող են. «Ընդհանուր առմամբ գոհ եմ տղաների ելույթներից: Կային մարզիկ-

ներ, որ ավելիին էին պատրաստ, բայց ընդհանուր առմամբ 21 մեդալը գոհացնող է: Ինչ վերաբերում է իմ ելույթներին, ապա վերջին շրջանում բազկամարտի մրցումների չեմ մասնակցում, բայց լավ մարզավիճակում էի ու սպասում էի, որ հաջող արդյունքներ կգրանցեմ»:

Ի դեպ, Ստեփանյանը վերջերս դարձել է պարաօլիմպիկայի միջազգային մրցաշարի (գնդի հրում և սկավառակի նետում) չեմպիոն: Մրցաշարը, որին մասնակցել է 15 երկրի 163 մարզիկ, անցկացվել է Չեխիայում:

Հայաստանի հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի ներկայացուցիչները նախապատրաստվում են հաշմանդամային բազկամարտի աշխարհի առաջնությանը, որը կմեկնարկի օգոստոսի վերջին Ռազախատում:

● Հայաստանի Հանրապետությունում 2023թ. հունվարից մայիսի 31-ը անչափահասների մասնակցությամբ տեղի է ունեցել 280 ճՏՊ, որի հետևանքով զոհվել է 6, վիրավորվել՝ 341 անչափահաս:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԾԱԽՍԵՐ՝ ՄՊԱՌԱՋԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշում է, որ ներկայիս կառավարությունը մինչև 2020-ի 44-օրյա պատերազմի մեկնարկը սպառազինության է ազդեցություն ունենում...

Փաշինյանն այս մասին ասաց 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովի դռնբաց նիստում:

Փաշինյանը վստահեցրեց, որ կառավարության ուշադրության կենտրոնում է եղել բանակի արդիականացման թեման ոչ այն պատճառով, որ ի սկզբանե պատերազմը համարել է անխուսափելի, այլ այն պատճառով, որ բանակի մարտունակության բարձրացումը կարող էր էականորեն բարելավել Հայաստանի բանակցային դիրքերը:

Փաշինյանը ասեց, որ 2008-ից հունվարի 1-ից մինչև 2018 թվականի մայիսը, այսինքն՝ 10 տարի 4 ամսում, Հայաստանի նախորդ կառավարություններն այդ նպատակի համար ծախսել են 354 մլրդ դրամ: Այսինքն՝ մենք 2 տարում իրականացրել ենք 10 տարվա ծեղրբերումների գրեթե կրկնակին»,-ասաց վարչապետը:

Ըստ Փաշինյանի՝ որեւէ մեկը չի կարող ասել, որ 2018-ին՝ իր վարչապետի պաշտոնը ստանձնելուց հետո, բանակում որեւէ բան չի արվել այն պատճառով, որ կառավարությունն ասել է՝ փող չկա: Փաշինյանն ամենամեծ ապացույցը համարեց «ՍՈՒ-30»-ների ձեռքբերումը: «Ես ասել եմ՝ ինչ պետք է բանակին, մենք դա կապահովենք, եւ ձեր խնդիրը չէ, թե ոնց»,-նշեց նա:

ԲՈՒՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՂԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

American Journal of Clinical Nutrition-ում հրատարակված հետազոտությունը նոր սվյալներ է ներկայացնում ֆիչ ուսումնասիրված հարցի վերաբերյալ՝ ինչպես են բուսական սննդի գերակշռությամբ դիտարկվող ազդում երեխաների առողջության վրա:



Վերջին տարիներին ավելացել է հետաքրքրությունը բուսական սննդի գերակշռությամբ դիտարկվող նկատմամբ: Պատճառներից մեկը, թե ինչու են մարդիկ անցնում բուսական կամ վեգանական դիետաների, առողջության մասին հոգալն է: Մսվերու վերաբերյալ շատ ուղեցույցներ խորհուրդ են տալիս հնարավորինս շատ ուտել բուսական ծագման մթերքներ: Բուսական դիետաների ազդեցությունը հիմնականում ուսումնասիրվել է մեծահասակների մոտ: Հայտնի է, որ բուսական դիետաները կարող են նվազեցնել սրտանոթային հիվանդությունների ռիսկը, սակայն մեծացնում են կոտրվածքների հավանականությունը, քանի որ բուսական սնունդը քիչ կալցիում է պարունակում:

Սակայն բավականաչափ հայտնի չէ, թե ինչ կողմնակի ազդեցություններ կարող է ունենալ սննդակարգից սննդի ամբողջական խմբերի բացառումը երեխաների վրա: Նոր հետազոտությանը մասնակցել է 5-ից 10 տարեկան 187 առողջ երեխա: Նրանցից 60-ը եղել են բուսակերներ, 50-ը՝ վեգաններ, իսկ 70-ը սնվել են բոլոր տեսակի սնունդով (հսկիչ խումբ): Նրանք բոլորը մեկ տարուց ավելի հետևել են նշված դիետաներին: Երկու շաբաթվա ընթացքում սննդի քննարկը հստակեցնելու համար ծնողները մանրամասն գրել են, թե ինչ են ուտում երեխաները:

Հետազոտությունը ցույց է տվել, որ այն երեխաները, որոնք կերել են միայն բուսական սնունդ, սրտանոթային առողջության ավելի լավ ցուցանիշներ են ունեցել (մարմնի քաշ, լիպիդների եւ արյան մեջ գլյուկոզայի մակարդակ եւ այլն): Մասնավորապես, վեգանական դիետան կապված է եղել արյան մեջ ցածր խտության լիպոպրոտեինի («վատ» խոլեստերինի) մակարդակի 25 տոկոսով նվազման հետ՝ ի տարբերություն միս ուտողների հետ:

Միևնույն ժամանակ, ի զարմանս գիտնականների, այն երեխաները, որոնք բուսական սնունդով դիետայի են հետևել, սրտանոթային համակարգի առողջական պրոֆիլը մոտ է եղել այն երեխաների ցուցանիշներին, որոնք կերել են մսեւ տեսակի սնունդ: Վեգանների համեմատ՝ նրանց մոտ անոթի ժամանակ գլյուկոզայի, շատ ցածր խտության լիպոպրոտեինների եւ տրիգլիցերիդների մակարդակն արյան մեջ բարձր է եղել:

«Սկզբում մենք զարմացած էինք բուսակեր երեխաների սրտանոթային առողջու-

թյան վիճակով, սակայն նրանց սննդակարգի տվյալները ցույց տվեցին, որ նրանք ուտում էին վերամշակված բուսական սնունդ, որոնցում բջջանյութի եւ շաքարի մակարդակն այնքան էլ առողջ չէ, որքան վեգանների սննդակարգում: Մենք տեսնում ենք, որ միայն բուսական մթերքներ ուտելը բավարար չէ, մենք դեռ պետք է առողջ սնունդ ընտրենք», -ասել է Լոնդոնի համալսարանական քոլեջի եւ Վարշավայի մանկական առողջության հիշատակի ինստիտուտի պրոֆեսոր, հետազոտության համահեղինակ Մալրոժատա Դեսմոնդը: Վեգան երեխաները միջինը 3 սանտիմետրով ավելի ցածրահասակ են եղել, քան այլ կերպ սնվող երեխաները, նրանց մոտ աճած է եղել վիտամին B12-ի պակաս, ոսկորներում հանքային նյութերի պարունակությունը 4-6 տոկոսով ցածր է եղել: Գիտնականները նշում են, որ վեգանական դիետայում ավելի քիչ են B12 եւ D վիտամինները, ինչպես նաեւ կալցիումը: Սա կարող է բացատրել նրանց մոտ հայտնաբերված զարգացման առանձնահատկությունները: Սակայն հետազոտության հեղինակները կարծում են, որ այդ թերությունները կարելի է փոխհատուցել այդ նյութերով սննդային հավելումների ռացիոնալ օգտագործմամբ:

Հեղինակները գրում են, որ ներկայումս հայտնի չէ, թե արդյոք նկարագրված խնդիրները (վիտամինների պակասը, ոսկրերի ավելի ցածր հանքային խտությունը եւ ցածր հասակը) կպահպանվեն հասուն տարիքում, եւ արդյոք դրանք ապագայում կազդեն առողջության վրա: Պարզելու համար, թե արդյոք վեգանական դիետան է իսկապես դրա պատճառը, պետք է լրացուցիչ հետազոտություններ արվեն:

ՏՎՅԱԼՆԵՐ

ԷԳՈՒՄԱՐԳ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը հայտարարագրել է համատեղ սեփականության մեկ բնակարան՝ Երեւանի Կենտրոն վարչական շրջանում, եւ մեկ հողամաս՝ Նոյեմբերյան քաղաքում: Աղաջանյանը հայտարարագրել է 2 մոտոցիկլ՝ YAMAHA 2021 թվականի արտադրության եւ Parvaz GL մակնիշի, որը 2013 թվականի արտադրության է, նաեւ 2013 թվականի արտադրության Nissan մակնիշի ավտոմեքենա, որոնք տարեվերջին պահպանվել են: Նախկին DJ Ed Ward-ը հայտարարագրել է աշխատանքի վարձատրության դիմաց ստացած գումար ՀՀ Ազգային ժողովից՝ 9 մլն 377 հազար դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 635 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները տարեվերջին կազմել են 300 հազար դրամ, իսկ բանկային դրամական միջոցները՝ 812 հազար դրամ: Էդուարդ Աղաջանյանը հայտարարագրել է նաեւ մեկ բնակարան, որը փաստացի պատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է ՔՊ-ական պատգամավորի կողմից: Այսպիսով, Էդուարդ Աղաջանյանի եկամուտը, ըստ 2022 թվականի հայտարարագրի, կազմում է 9 մլն 477 հազար դրամ:

Մայիսի 5-ին կայացած ԱԺ նիստի ընթացքում «Քաղաքացիական պայմանագիր»

խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը հայտարարեց, որ այսօր որեւէ միջին վիճակագրական խնդրոց առանց թմրանյութերի չի անցնում: Նախկին DJ-ը հարցին, թե արդյոք իր մասնակցությամբ խնդրոցները թմրանյութերով են անցնում, պատասխանեց. «Իմ ասածը ուղիղ իմաստով մի հասկացեք. ես կարծում եմ հասարակությունը լավատեղյակ է՝ ես ինչի մասին եմ խոսում, եւ իմ ասածի մեջ որեւէ արտառոց բան չկա»: Իշխանական պատգամավորի այս հայտարարությունը որեւէ ընթացք չստացավ: Նկատենք, որ Էդուարդ Աղաջանյանի հետ համատեղ բնակվող անձ Վիկտորյա Այդինյանը փոխվարչապետ Միեր Գրիգորյանի խորհրդակցական է, սակայն Վիկտորյա Այդինյանի հայտարարագրում համատեղ բնակվող անձանց մեջ էդուարդ Աղաջանյանը չկա, միայն Այդինյանի ընտանիքի անդամներն են:

Այդինյանը հայտարարագրել է բնակարան, որը, ինչպես Էդուարդ Աղաջանյանի դեպքում, փաստացի պատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է խորհրդակցականի կողմից: Վիկտորյա Այդինյանի բանկային դրամական միջոցները կազմում են 1 մլն 616 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 800 հազար դրամ: Փոխվարչապետի խորհրդակցանք աշխատանքի վարձատրության դիմաց «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամից ստացել է 2 մլն 697 հազար դրամ:

ԷՄՍՍ ՄԻՔԱՅԵՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սոնա Գաբրելյանի Հակոբյանը կորցրել է AK115737 համարի դիպլոմը՝ տրված Երեւանի ֆիզմաթ գիտությունների ակադեմիայի կողմից:

Նի Փ. Թերլեմեյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի կողմից: Տնօրենի՝ 21.06.2013թ. թիվ 97 հրամանի համաձայն՝ ձեռք է բերել քոլեջում «Դիզայն» մասնագիտությունը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԿՆԵՐ ԳՈՐԾԻ

Հարգելի հաճախորդներ, տեղեկացնում ենք, որ «Յունիբանկ»-ի «Աջափնյակ» մասնաճյուղում /Երեւան, Մարգարյան 29/11/ 19.06.2023թ.-02.01.2024թ. ներառյալ իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ, որոնց պատճառով նշված ժամանակահատվածում հաճախորդների սպասարկում չի իրականացվի: «Աջափնյակ» մասնաճյուղն իր աշխատանքը կվերսկսի 03.01.2024թ.-ից: Հայցում ենք Ձեր ներողամտությունը պատճառաբանել անհարմարությունների համար եւ առաջարկում այդ ժամանակահատվածում սպասարկվել «Յունիբանկ»-ի մոտակա այլ մասնաճյուղերում: «Գետրոգ Չաուշ» /Երեւան, Բաշինջաղյան 188/5-6/, «Դավիթաշեն» /Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 112, հ 92/: «Յունիբանկ»-ի մասնաճյուղերի հասցեներին եւ աշխատաժամերին կարող եք ծանոթանալ www.unibank.am կայքում: Տեղեկատու կենտրոն՝ +374 10 59 55 55: «Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«ժողովորդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԻՄԵՐՍԻՎ ՓԱՌԱՏՈՆ՝ ՏԱԹԵՎՈՒՄ

Փառաքան բեմադրություններ, վարդերային դասեր, երաժշտություն, ազգային դարեր և խաղեր, ավանդական ուսեսներ և արջայն դասական հին գյուղեր...



Սարերում
In the Mountains
B ropax
ԻՄԵՐՍԻՎ ՓԱՌԱՏՈՆ
ՏԱԹԵՎՈՒՄ
IMMERSIVE FESTIVAL IN TATEV
ИММЕРСИВНЫЙ ФЕСТИВАЛЬ В ТАТЕВЕ

24.06 - 25.06
Մուտքն ազատ է

Փառատունի հյուրերն ու զբոսաշրջիկները հնարավորություն կունենան մասնակցելու տարատեսակ միջոցառումների...

«Փառատունները շատ կարեւոր դեր ունեն զբոսաշրջության ոլորտի համար: ՀՀ զբոսաշրջության կոմիտեն զարգացնում է զբոսաշրջությունը 4 հիմնական ուղղություններով...

«Փառատունները կընթացնեն մի քանի ուղղությամբ՝ ներգրավելով տարբեր տարիքային խմբերի հետաքրքրություններ...

Փառատունը կընթացնեն մի քանի ուղղությամբ՝ ներգրավելով տարբեր տարիքային խմբերի հետաքրքրություններ...

հետո այցելուները կմասնակցեն ազգային խաղերի ու պարերի:

«Տաթեվեր» ճոպանուղու Հալիձոր կայանի մոտ ողջ օրն ընթանալու է տոնավաճառ, որտեղ տեղացի արհեստավորները ցուցադրելու են տարածաշրջանի ավանդական արհեստները...

Փառատունի շրջանակում սյունեցի դերասանների ներգրավվածությամբ կկայանա «Միջնադարյան ընթրիք ազնվական Օրբելյանների ընտանիքի հետ» հատուկ ճաշերույթ-բեմադրությունը:

Կիրականացվի նաև շրջայց դեպի Հին Հալիձոր գյուղ՝ դիտելու «Տեղական ապրելակերպ 17-րդ դարում» ինտերակտիվ ներկայացումը...

«Մեր նպատակն է «Սարերում» փառատունի շնորհիվ խթանել զբոսաշրջային հոսքը դեպի Սյունիք՝ Տաթեվ, ինչպես նաև ներկայացնել Սյունիքի հարուստ պատմությունն ու մշակույթը...

հանգստյան օրեր: Փառատունը նշանակալից է նաև նրանով, որ զբոսաշրջիկների նոր հոսքը դեպի Տաթեվ կունենա դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն ամբողջ համայնքի վրա»,- ասել է փառատունի նախագծի ղեկավար Անի Ղալթյանը:

«Սարերում» փառատունն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ: Փառատունի կազմակերպիչներն են «Տաթեվի վերածնունդ» հիմնադրամը, «Ռուբեն Վարդանյան» հիմնադրամը, «Իմպուլս Մենեջմենթ» ընկերությունը և «Տաթեվեր» ճոպանուղին:

«Տաթեվեր» աշխարհի ամենաերկար մարդատար ճոպանուղին է, որը ներառվել է Գինեսի ռեկորդների գրքում: Ճոպանուղին շահույթ չհետապնդող ծրագրի՝ «Տաթեվի վերածնունդ» հիմնադրամի մի մասն է, որից ստացված շահույթն ուղղվում է Տաթեվի վանքի վերականգնմանը և հարակից տարածքների զարգացմանը:

«Տաթեվի վերածնունդ» հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի հիմնական նպատակներն են Տաթեվի վանքի վերականգնումը, մարզի համայնքների զարգացումը, մարզում նոր աշխատատեղերի և անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը, Տաթեվի զբոսաշրջային ուղղության զարգացումը և տեղական ձեռնարկատերերին աջակցության տրամադրումը:

ՄԱՐԶԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՅԾԱԿԵՆԱՅԻՆ ԸՆԽՄԱՏԻ ԶԵՄՊԻՈՆԵՐ

Հայաստանի թիմը նվաճեց Լեհաստանի Կրակով քաղաքում անցկացված կայծակնային շախմատի «Եվրոպայի գույգ» առաջնության չեմպիոնի տիտղոսը...

ԸՆՈՐՀԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՏՂԱՆԵՐԻՆ

Երեւանում կայացավ «Եվրո-2024»-ի ընտրական փուլի 4-րդ տուրի Հայաստան-Լատվիա հանդիպումը:

Հանդիպումովից հետո իր կարծիքն է հայտնել Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը: «Ֆունկցիոնալ առումով բավականին դժվար էր մեր ֆուտբոլիստների համար: Շնորհակալ եմ տղաներին, որ բնավորություն ցույց տվեցին:

Փոխարինման դուրս եկած ֆուտբոլիստներից գոհ եմ: Նրանք թարմություն մտցրեցին: Շատ գոհ եմ նրանց խաղից, նվիրումից»,- ասել է մարզիչը:

ՏԻԿԵՏԻ ԶՅԱՆԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՅՈՂ

Սոսկվայի «Լոկոմոտիվի» պաշտպան Նաիր Տիկնիզյանը ճանաչվել է «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի չորրորդ տուրի Հայաստան - Լատվիա հանդիպման լավագույն խաղացող՝ WhoScored-ի վարկածով:

Ազգային թիմում առաջին գոլը խփած 24-ամյա ֆուտբոլիստը ստացել է ամենաբարձր գնահատականը՝ 7,9:

Հայաստանի հավաքականն առավելության էր հասել 2:1 հաշվով և D խմբում երկրորդն է՝ 6 միավոր:

«Եվրո-2024», ընտրական մրցաշար, չորրորդ տուր
D խումբ
Հայաստան - Լատվիա՝ 2:1
Նաիր Տիկնիզյան, 35, Տիգրան Բաբոյան, 90+1, 11մ - Ռոբերտո Սավալիկեկս, 67

Հայաստան
1. Օգլյեն Չանչարեիչ, 3. Վարազդատ Հարոյան (ա), 4. Գեորգի Հարությունյան, 5. Ստյոպա Մկրտչյան, 6. Ուզոնյուկու Իվու (18. Հովհաննես Հարությունյան, 90+5), 8. Էդուարդ Սպերցյան, 10. Լուկաս Սելարայան (9. Արթուր Սերոբյան, 77), 14. Նորբերտո Բրիսկո, (23. Վահան Բիչախչյան, 33), 17. Հրանտ-Լեոն Ռանու (11. Տիգրան Բաբոյան, 77), 20. Արտակ Դաշյան, 21. Նաիր Տիկնիզյան: Պահեստայիններ՝ 12. Ստանիսլավ Բուչնե, 16. Արսեն Բեգլարյան, 2. Դավիթ Դավիդյան 7. Ժիրայր Շաղոյան, 13. Սերգեյ Մուրադյան, 15. Ժիրայր Սարգսյան, 19. Վբեյմար Անգուլո, 22. Էրիկ Փիլոյան:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅՏՆԻ ԵՐԳՉՈՒՂԻՆ ՄԵԿԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՒՄ Է ՄՏԱՅԵԼ

Բրիտանացի երգչուհի Ադելը դասնել է, որ Լաս Վեգասում երայք ունենալիս սնկային վարակ է ստացել աստիճանով: Այս մասին հաղորդում է Page Six-ը:

«Ես շատ եմ քրտնում, և դրանից շրջանցելու հնարավորություն չկա: Բեմում ես ուղղակի եռում եմ իմ քրտինքի մեջ», - կիսվել է Ադելը: Երգչուհու խոսքով՝ բժիշկն իր մոտ սնկային վարակ է ախտորոշել, որը հայտնի է որպես «մարզիկների քոր»: Աստղը բացատրել է, որ վարակը ստացել է իր անվանումը, քանի որ այն տարածված է «մկանուտ» մարդկանց մոտ, ովքեր շատ ժամանակ են անցկացնում մարզասրահում: Հիվանդությունը դրսևորվում է որպես քոր առաջացնող ցան և առավել հաճախ ախտահարում է ձեռքերի ու ազդրերի ներքին մակերեսը: Այժմ Ադելը ցանից փորձում է ազատվել բժշկի նշանակած հատուկ քսուքով:

«Ես չգիտեմ, թե ինչու հենց այս պահին պատմեցի Ձեզ այս ամենի մասին: Այժմ տաբուրիդները կգրեն. «Ադելը մարմնի վրա պզուկներ ունի»», - կատակել է աստղը:

Ադելը Լաս Վեգասի Caesars Palace համերգային դահլիճում 60 ելույթների պայմանագիր է կնքել: Մայիսի կեսերին New York Post-ի ինսայդերները հայտնեցին, որ երգչուհին յուրաքանչյուր համերգի համար ստանում է մոտ 2 միլիոն դոլար:

Նա ավարտեց պայմանագրի առաջին մասը՝ բաղկացած 26 ելույթից, մինչև ապրիլի 16-ը: Առաջիկայում կա եւս 34 շոու: Նշվում է, որ Ադելի ելույթի համար համերգասրահի ամենաէժան տոմսն արժե մոտ 600 դոլար:

● Հունիսի 22-ին «Թատրոն Կայարան»-ում տեղի կունենա «Անկոչ հյուրը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Պատվաստանյութը կարո՞ղ է իմ երեխայի հիվանդության դասճառ դառնալ:
Անահիտ Առուստամյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվաստանյութերը շատ անվտանգ են և հազվադեպ են կողմնակի ազդեցություններ ունենում: Պատվաստումից հետո հնարավոր բոլոր «բարդություններն» ու անհարմարությունը, ասենք՝ ներարկման տեղում առկա բորբոքումը կամ ջերմության աննշան բարձրացումը, չնչին են և ժամանակավոր: Դրանց դեմ հաճախ կարելի է պայքարել՝ բժշկի խորհրդով ամենահասարակ ցավազրկող դեղորայք ընդունելով կամ ներարկման տեղում սառը թրջոց դնելով:

«Յուսիսեֆ Յայաստան»

«ԺՈՂՎՈՒՐԳ». Եթե ծնողները մտահոգվում են, նրանք պետք է խոսեն իրենց բժշկի կամ բժշկական ծառայություն մատուցողի հետ:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար նախատեսված տուրքը ինչքա՞ն է կազմում:

Միքայել Ասրյան (37 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Պետական տուրքի մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար գանձվում է պետական տուրք՝ բազային տուրքի չափով /1000 ՀՀ դրամ/:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունների հարթակ

«ԺՈՂՎՈՒՐԳ». Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու /դադարեցնելու/ համար գանձվում է բազային տուրքի 25-պատիկի չափով /25.000 ՀՀ դրամ/:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Հայաստանի հավաքականը՝ Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում տեղի ունեցած Հայաստան-Լատվիա ֆուտբոլային հանդիպումից հետո: Հանդիպումն ավարտվեց 2:1 հաշվով: Գոլի հեղինակ դարձան Նաիր Տիկնիզյանն ու Տիգրան Բարսեղյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



| | | | | | |
|---|-----------------------|----------------------|---|-----------------------|----------------------|
| ☀ | Շիրակ | +7 + 11 +18 + 23 | ☀ | Արարատ | +15 + 18 +29 + 31 |
| ☀ | Կոտայքի լեռներ | +6 + 10 +17 + 21 | ☀ | Արմավիր | +13 + 16 +28 + 30 |
| ☀ | Կոտայքի նախալեռներ | +14 + 16 +25 + 29 | ☀ | Վայոց ձորի լեռներ | +8 + 11 +19 + 21 |
| ☀ | Գեղարքունիք | +6 + 10 +17 + 22 | ☀ | Վայոց ձորի նախալեռներ | +16 + 19 +28 + 31 |
| ☀ | Լոռի | +7 + 11 +18 + 21 | ☀ | Սյունիքի հովիտներ | +15 + 19 +28 + 32 |
| ☀ | Տավուշ | +10 + 16 +20 + 24 | ☀ | Սյունիքի նախալեռներ | +12 + 14 +20 + 23 |
| ☀ | Արագածոտնի լեռներ | +6 + 9 +17 + 20 | ☀ | Արցախ | +15 + 19 +25 + 29 |
| ☀ | Արագածոտնի նախալեռներ | +12 + 17 +24 + 29 | ☀ | Երեւան | +14 + 17 +27 + 29 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 20.6.2023
Պատկերը հեղինակի մտքի և ստեղծագործությանն է պատկանում

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: